

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՌԱԴԻՈՅԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Ա.Է. Օհանյան

գրականության և ժուռնալիստիկայի ամբիոն

Տարիներ շարունակ Լեռնային Ղարաբաղի բնակչությունը զրկված էր հայկական լիարժեք խոսք ստանալու հնարավորությունից: Մարզկենտրոնում լույս տեսնող հայերեն միակ «Սովետական Ղարաբաղ» պարբերականից բացի չկար մեկ այլ լրատվամիջոց, որը կարողանար ամբողջապես ներկայացնել հայկական մարզի կենսակերպը, բավարար տեղեկատվություն տալ կատարվող իրադարձությունների մասին, կապ ստեղծել Հայաստանի, հայոց մշակույթի, գրականության և արվեստի հետ: ԼՂԻՄ-ը կարող էր ստանալ միայն կենտրոնական, ասել է թե՛ աղբյուրների և մոսկովյան թերթեր, լսել աղբյուրներին և ռուսերին լեզուներով ռադիոհաղորդումներ, հետապնդում նաև դիտել նմանատիպ հեռուստահաղորդումներ: Անշուշտ, դարաբաղյան ռադիոյի ծնունդը, շատ տարիներ անց նաև հեռուստատեսության ստեղծումը, պատմական կարևոր երևույթ էին հայոց Արցախի ազգաբնակչության կյանքում:

Ղարաբաղում տվագրության գործի սկզբնավորման, հայկական պարբերականների ստեղծման մասին որոշակի խոսք արդեն ավել է: Բայց հաս էլենտրոնային ՋԼՄ-ները (հատկապես ռադիոն) շարունակել է մնալ սովորյալ, որոնց պատմության վերհանումը, կարծում ենք, այսօր անհրաժեշտ է, քանզի արդեն իսկ ուշանալու խնդիր կա, որովհետև տարիներն անցնում են, հիշողությունները խուսափում, իսկ արխիվային նյութերը խոստումնալից չեն և արխիվումներն էլ ոչ ոյություն: Կարևոր էր համարում համառոտակի ներկայացնել դարաբաղյան ռադիոյի ընթացքը:

Ինչպես հայտնի է, 1920-30-ական թվականները նշանավորվեցին աշխարհի մի շարք երկրներում, առաջին էլենտրոնային լրատվամիջոցի երեւան գալով: Այդ տարիներին ռադիոն մուտք գործեց ներուպական և արեւելյան տարբեր երկրներ: Հենց այդ ժամանակաշրջանում էլ համաշխարհային «քաղաքակրթությունը» հասավ նաև մեզ:

Արխիվային նյութերը առայժմ թույլ չեն տալիս ստույգ ներկայացնել Ղարաբաղի ռադիոյի ծննդյան թիվը: Եղած բոլոր թվականները հսկասական են: Անմիջապես պիտի նշել, որ ռադիոյի վերաբերյալ առաջին արխիվային փաստաթուղթը վերաբերում է 1946 թվականին, թե՛ն ռադիոն ստեղծվել է շատ ավելի վաղ: Նախկինում ստեղծված արխիվային նյութերը դարաբաղյան պատերազմի ժամանակ ըմբռնության և իրախուսկության հետեւանքով ոչնչացվել են: Այնուամենայնիվ, ռադիոյի 1950 թվականի արխիվային ֆոնդում գտնվել է մի փաստաթուղթ, որում նշվում է, թե 1950 թվականի օգոստոսի 17-ին կայացած Ստեփանակերտի ռադիոյալսողների կոնֆերանսում Ստեփանակերտի Ստալինի անվան թանգարանի տնօրեն Սուրեն Հախումյանը իշ- երություն նշել է, որ ռադիոն մարզում սկսել է գործել 1920 թվականից: Եվ տարիների ընթացքում այն ընդլայնվել է ու զարգացել: Սակայն այս տվյալը կասկածներով տեղիք է տալիս, քանի որ Բարվի ռադիոյի հաղորդումները հեռարձակվում էին 1926 թվականից և հնարավոր չէր, որ մարզային ռադիոն առաջ անցներ հանրապետականի:

Սույն կոնֆերանսի ժամանակ, ռադիոյի այն ժամանակվա գլխավոր խմբագիր Ջուլեն Դավթյանը նշել է. «Ստեփանակերտում 1928 թվականին սկսում է աշխատել ռադիոհանգույցը: Կարճ ժամանակամիջոցում հանգույցներ են կառուցվում մարզի մյուս շրջաններում»:

1928 թվականը հանդիպում ենք մեկ այլ աղբյուրում: Լեռնային Ղարաբաղի Ինքնավար մարզի 50-ամյակի առթիվ տպագրված «Вспомогательное» գրքում ռադիոյի ստեղծման վերաբերյալ կա բառացիորեն ներու նախադասություն. «1928 թվականին ԼՂ-ի աշխատավորները առաջին անգամ լսեցին մարզային ռադիոյի հաղորդավարի ձայնը: Այդ պահից ռադիոն և հեռուստատեսությունը կայուն կերպով մուտք են գործել դարաբաղյան երկրի կյանք, դարձել են զանգվածային լրատվության հզոր միջոցներ»: Մի քանի աղբյուրներում կիսաշատակվող 1928 թվի թույլ է տալիս հաստատելու ռադիոյի ստեղծման տարին, իսկ Ս. Հախումյանի երություն նշված 1920 թվի հնարավոր է՝ տպագրական սխալ լինի: 1928 թվի կապակցի չէր առնվի, եթե չլինեք մեկ այլ արխիվային փաստաթուղթ: 1963 թվականի հուլիսի 30-ին ռադիոյի գլխավոր խմբագիրը դիմում է Աղբյուրների և ՍՄԿ միջնորդների տվեցին (ից ռադիոյի և հեռուստատեսության պետական կոմիտեի նախագահ Տ. Ալիեւին, որպեսզի նա ԼՂԻՄ-ի կազմավորման 40-ամյակի և ԼՂԻՄ ռադիոհաղորդումների խմբագրության հիմնադրման 30-ամյակի առթիվ պարգևատրի մի շարք աշխատողներին: Եվ եթե 1963 թվականին նշվում է ռադիոյի 30 տարին, ապա սովորական թվաբանության մարզային ռադիոն պիտի ստեղծված լինեք 1933 թվականին: Ստեփանակերտի մամուլի ակումբը նուս հրապարակել է ՋԼՄ-ների մի տեղեկանք դարաբաղյան ռադիոյի մասին: Այնտեղ

մասնավորապես նշվում է. 2002 թվականին դարաբաղյան թաղիում կնշի կլոր տարեթիվ՝ 70 տարի իր հիմնադրման օրվանից: Լեոնային Ղարաբաղում թաղիոհաղորդումների մարզային կոմիտեն ստեղծվել է 1932 թվականին»:

Եվ այսպես, թաղիոյի ծննդյան թվի մասին ուսումնասիրությունների շարքը դեռևս թողնելով անավարտ եւ ստիպված կորույկ անցում կատարելով 1946 թվականին, փորձենք ներկայացնել դարաբաղյան հետպատերազմյան թաղիոյի նկարագիրը:

1. ԼՂԻՄ թաղիոն 1940-50-ական թվականներին

Սկսած 1946 թվականից, Ղարաբաղի թաղիոն հանդես էր գալիս տարբեր անվանումներով. Աղբրեքանական ՄՍՀ մինիստրների սովետին կից թաղիոինֆորմացիայի կոմիտե, այնուհետև (1950թ.-ից) թաղիոինֆորմացիայի Ստեփանակերտի խմբագրություն, մինչ այդ պարզապես Ստեփանակերտի թաղիոն եւ թաղիոինֆորմացիայի պատրաստման խմբագրություն: Այդ տարիներին մարզային թաղիոյի հաղորդումները խմբագրում էր Զ. Դավթյանը (Ստեփանակերտի մարզային թաղիոինֆորմացիայի խմբագրության պատասխանատու խմբագիր): Սկզբնական անվանումը հուշում է, որ Ղարաբաղի թաղիոն գտնվում էր Ադր. ՄՍՀ մինիստրների սովետի ենթակայության ներքո.

1941-45 թվականների Հայրենական պատերազմից հետո ԼՂԻՄ թաղիոն սկսեց թարմանալ: Համապատասխան մարմինները տարբեր հանձնարարականներ էին ստանում ուղղված թաղիոյի բարելավման: Մասնավորապես մանր էր ապահովվել էլեկտրաէներգիայի անխափան մատակարարումը, բարելավվել Ստեփանակերտի թաղիոհանգույցը եւ մեկ ամսվա ընթացքում վերականգնել գյուղական վայրերի անգործունակ թաղիոկետները, արագացնել Ստեփանակերտ-Շուշի գծի անցկացման աշխատանքները եւ շահագործման հանձնել: Այդ ժամանակ է ստեղծվել նաև թաղիոսիրողների ակումբը:

Իսկ ինչ վերաբերում է թաղիոխմբագրության աշխատանքներին, ապա գլխավոր խմբագիր Զ. Դավթյանին հանձնարարվում է արմատապես վերափոխել հաղորդումները, նրանցում լուսաբանել ԼՂԻՄ շրջանների կյանքն ու գործունեությունը, բարձրացնել հաղորդումների գաղափարական բովանդակությունը, պարբերական խոստովող տրամադրել գյուղատնտեսության, արդյունաբերության բնագավառի առաջավորներին եւ մասնագետներին, քաղաքական հաղորդումների հետ միաժամանակ հաղորդացանցում հաշվի առնել նաև մշակութային, երաժշտական հաղորդումները, այս գործում ներգրավելով մարզի մշակույթի բաժինը, ակնական թատրոնը, երաժշտական դպրոցը, մոդերնիզացված առեղծագործության տան համայնքները: Իսկ ՄՍՀ Գործերի միության ԼՂ-ի մասնաճյուղին հանձնարարվել էր օգնել թաղիոխմբագրությանը՝ գրական-գեղարվեստական հաղորդումների կազմակերպման գործում:

1946 թվականին Լեոնային Ղարաբաղի բնակչությունը հնարավորություն ուներ ամեն օր 1.5 տան տնտեսությանը թաղիոհաղորդումնալ լսելու: Հնաց այդ թվականին է Ստեփանակերտում տեղադրվել թաղիոհեռադեպիչի նոր կայան հաղորդումները շրջանային թաղիոսարանին հասցնելու համար: Փաստորեն, 1946 թվիկ համարվում էր մարզային թաղիոյի վերականգնման ու վերադինման տարի: Սակայն, գեներալ հետո էր լիարժեք ԶԼՄ կոչվելուց:

Ռադիոյի թերությունները նկատելի էին նաև հետագա տարիներին եւ տեխնիկական, եւ բովանդակային առումով: 1948-ին Ստեփանակերտի թաղիոյի աշխատանքը համարվում էր անբավարար. լսելիությունը շատ ցածր էր, թաղիոհանգույցը աշխատում էր դադարներով, հասկապես նկատելի էին թաղիոստուգիայից տրվող հաղորդումների թերությունները: Անբարելավոյ էին նաև շենքային պայմանները: Նույն թվականի փետրվարի 28-ին փաստաթուղթ է ստորագրվում այս թերությունները շտկելու համար: Ըհիտ է, սկսում են ավելանալ թաղիորենդուխները (1948թ.-ին Ստեփանակերտի շրջանում կար 65 թաղիորենդուխ): Իսկ 1949թ. հունվարի 1-ի դրությամբ՝ 81), սակայն թաղիոհանգույցի եւ թաղիոստուգիայի անբավարար զինվածության, վատթար պայմանների խնդիրը դեռ չառնականվել ու բնաւարկվել է տարիներ շարունակ:

1948-1949թթ. թաղիոհաղորդումների մեկ ամսվա ջլովետներ հետեւյալ տնքն ուներ. կուսակցական, կոմերիտական կյանքի վերաբերյալ հաղորդումներ-508 նյութ, գյուղատնտեսության վերաբերյալ՝ 416, արդյունաբերության՝ 97, լուսավորության՝ 23, մշակութային խմբագրության վերաբերյալ՝ 153, անողջապահություն եւ սանիտարիա՝ 25, մանկական հաղորդումներ՝ 28, գեղարվեստական-գրական հաղորդումներ՝ 19, գիտահայրամատուցելի թեմայով թաղիոհասարակություններ եւ գրույցներ՝ 88: Ի դեպ, թաղիոհասարակությունները տարբեր թեմաներով շատ տարածված էին: Այս հաղորդումներից բացի օգտագործվել են նաև մեջքերումներ մարզային թերթերից, պարբերաբար հաղորդվում էին թերթերում տպագրվող առաջատար հոդվածները եւ պատրաստվում էին մասնովի տնայություններ: 3նորաբանչյուր ամիս խմբագրությունը առանձնացնում էր այն իլյարական տարերվերը, որոնց պիտի անդդարառնեայ իր թողարկումներում: Այդ տարեթվերի մեջ, սակայն, չկար ոչ մի հայկական անուն կամ Հայաստանի հետ կապված որեւէ տարեթիվ: Աղբրեքանական քաղաքականության այս դրսևորումը ակնհայտ է նաև թաղիոհաղորդումների քննադատական նյութները: Փաստորեն, մարզում գործում էր

հայկական առդիո, որի միակ լեզուն էր (այն էլ ոչ ամբողջովին) հայերեն, իսկ հաղորդումներում Ադրբեջանն էր ու Մոսկվան:

1948-49թթ. ռադիոն աշխատում էր շատ փոքր կոլեկտիվով, մեկ պատասխանատու խմբագիր, երկու խմբագիրներ, մեկ գրական քարտուղար, մեկ ինստրուկտոր, մեկ հաղորդավար, մեքենագրուհի, հաշվապահ:

1950-51թթ. համընկնում էին ողջ Սովետական Միությունում հայտարարված ստալինյան հեռավարության մերակառուցման և զարգացման հնգամյակի ավարտին: Ուստի դարաբաղյան ռադիոն նույնպես պարբերաբար հաղորդումներ էր տալիս սովետների երկրում տիրող իրավիճակի մասին: Իսկ աղբյուրները թնթթն էին ու կենտրոնական ռադիոն: Պահպանվում են այդ հաղորդումների մի շարք քնագրեր: Բոլոր հաղորդումներում առկա էր հայ-ուս-ադրբեջանական ժողովուրդների «լենինյան» բարեկամության քաղաքականությունը: Խմբագրությունը շարունակում էր աշխատել նույն ոճով, կոմունիստական պրոպագանդա և ազդեցիկ, գյուղատնտեսության, արդյունաբերության զարգացում, կոմունիստների, կոմերիտականների խիստ խոշոր, ներտասարդակալ կյանք: Եվ այդպես էլ սովերի տակ էին մնում հայկական մշակույթի, գրականության անվանի արվեստագետների և գործիչների մասին հաղորդումները: Իսկ դրանց վերհանման ամենաչնչին փորձերը քննադատվում էին: Օրինակ, Ադրբեջանական ՍՍՀ մինիստրների սովետին կից ռադիոհինժորմացիայի կոմիտեի նախագահ Աբասգադին, որը ուշադիր հետևում էր խմբագրության աշխատանքներին, իր դիտողություններում գրում է, որ հաղորդումներն անհետաքրքիր են, միօրինակ, անտառանկի: Մեկ ամսվա ընթացքում խմբագրությունը երկու անգամ տվել է տեղի երիտասարդ բանաստեղծների ելույթները: Դա շատ լավ է, նշում է Աբասգադին, միայն բանաստեղծների ընտրության հարցում հարկավոր է լինել խստապահանք: Աբասգադին շարունակում է «Անհատականի է, օրինակ, թե ինչու է հաղորդվել Արմո Ուլուբաբյանի «Ձիվորը» բանաստեղծությունը: Բանաստեղծը խոսում է ինչ-որ մարդու մասին «որը երբևէ զինվոր էր, թշնամուն հաղթել էր զենքով», իսկ այսօր նա թշնամուն հաղթում է խոսքով: Ո՞վ է այդ զինվորը, որ «բայլում է մեր երկրից անդին», ո՞ր բանակի զինվորն է նա, ե՞րբ են որոնե՞ղ է կատարվում գործողությունը: Ժամանակից և տարածությունից դուրս գործ է դա, որ ոչ մի դեպքում չսկսե՞ր է հաղորդվել»: Աբասգադին նույն ոգով շարունակում է. «Նույն անդրադարձությունը մենք տեսնում ենք Սուրեն Ստեփանյանի «Հողի կարտը» բանաստեղծության մեջ: Բանաստեղծը հանդիպում է ինչ-որ անհայտ ծերունու, որը համբուրում է հողը: Այդ մարդու մասին սափում է, որ ճայրենիքից շատ վաղուց բաժանված է եղել, որ նրա մազերը ճեմնակել են օտար երկրի օձմեռներին, որ նա ամենուր կրել է աղբատնություն ու տանջանք, և որ այժմ նա հայրենիքի մայրական կանչով իր գիրքն է եկել և ազատ հայրենիքում ջանկացել: Հարգ է ծագում, ո՞վ է այդ խորիքավոր մարդը, և ո՞րն է նրա հայրենիքը, ի՞նչ օտար օձմեռների մասին է խոսքը: Ինչու՞ բանաստեղծը կոնկրետ չի նշում այդ», ավարտում է Աբասգադին: Փոխարենը, նա գտնում է, որ ռադիոթողարկումներում շատ քիչ ուշադրություն է դարձվում ադրբեջանական պոեզիային:

Նախկինում մեկ ժամ տեղեղությանը հաղորդումների փոխարեն 1951թ. դեկտեմբերին Ադր. ՍՍՀ մինիստրների կից ռադիոհինժորմացիայի կոմիտեի նախագահ Կուրբանովի որոշմամբ, 1952 թվականի հունվարի 1-ից հաղորդումները պիտի կրճատվեն կես ժամով, ժամը 19.00-19.30 (հայերեն և ադրբեջաներեն): Սակայն ռադիոյի խմբագիր Ջ. Դավթյանը Ադրբեջանի կոմկուսի կենտրոնի ԼՂ-ի մարզկոմի քարտուղար Մարկիսովին խնդրում է աջակցել, որ հաղորդումները թույլատրվեն ոչ թե երկու, այլ երեք լեզուներով, հաշվի առնելով, որ քաղաքի բնակչության զգալի մասը ռուսներ են: Նման թույլտվություն տրվում է, քայց մինչև 1953 թիվը: 1953-ի նոյեմբերի 25-ին Ադր. մինիստրների ռադիոհինժորմացիայի կոմիտեի նախագահի տեղակալ Աբասգադին Ջ. Դավթյանին իրախանգում է ռադիոհաղորդումները դարձնել երկլեզու, հայերեն 45 րոպե և ադրբեջաներեն 15 րոպե, իսկ ռուսերեն թողարկումների խմբագրին ազատել աշխատանքից, փոխարենը վերցնել գրական քարտուղարի:

1950-ական թվականների հաղորդումներում նկատվում էր նյութերի որոշակի քաղաքականություն: Ադրեն հաճախակի էին դարձել տեղի հեղինակների պատրաստած ակնարկները, կազմակերպվում էին մարզի գրողների ելույթներ և այլն: Ոչադրական հեռարձակումների, ներտասարդների, պիոներների, դպրոցականների հասցեագրված, գրական-գեղարվեստական հաղորդումների համար օգտագործվում էին Մոսկվայից ու Բարձրից ստացված նյութերը, ինչպես և կենտրոնական և հանրապետական (ադրբեջանական) թերթերի և ամսագրերի նյութերը, հատկապես գեղարվեստական երկերից: Մեկ ամսվա ընթացքում միջինը հաղորդվում էր 600-700 ինժորմացիա, հոդված, ակնարկ և այլ նյութեր մարզի տնտեսական և քաղաքական կյանքի վերաբերյալ: Այդ տարիներին արգել կային «լեճեռանի» կոլյեսներ: Խոսակցողի առջև հանդես էին գալիս արտադրության ստաբալորները, մուսուլմանականները, պոլիտանտիստության բնագավառի մասնագետները: Սակայն այս հաղորդումները սկսեցին նվազել, քանի որ հեղինակային հոնորարները քիչ էին

(մոտ 3-4 ուրբի յուրարանչությունը) և շահագրգռվածությունը, ըստ այդմ, մեծ չէր: Պետք է նշել նաև, որ հաղորդվող ինֆորմացիաները աչքի չէին ընկնում հրատապությամբ և օգնարարությամբ, դրանք մշակվում էին առանց խնամքի, առանց փաստերի ճշգրտության: Ռադիոյի աշխատակիցները այս թերություններն արդարացում էին շնորային ու տխրահիսկյան անբավարար պայմաններով: Խմբագրությունն այդ ժամանակ զբաղեցնում էր ռադիոհանգույցի սպասանմանը, ինչը խանգարում էր խմբագրության նորմալ աշխատանքին: Ռադիոխմբագրության տնօրինությունը այս հարցով մի շարք անգամ դիմել է համապատասխան մարմիններին, բայց «սալը տնդից չի շարժվել»: Ի դեպ, արխիվային նյութերում շատ են նման կարգի դիմումները: Բայց ինչպես երևում էր արձագանքներից, աղբյուրանական ղեկավարությունը անտարբեր էր հայկական ռադիոյի նկատմամբ:

Տեղական ռադիոյի առաջընթացը նկատելի էր նրանով, որ աճում էր ռադիոկետների թիվը, ռադիոֆիլիացվում են նոր քնակավայրեր: Միայն Ստեփանակերտի ռադիոհանգույցը սպասարկում էր 1600 ռադիոկետ, Շուշիում տեղադրվել էր 500 վատու հզորությամբ նոր սարքավորում, որտեղ Ստեփանակերտից տարվել էր հատուկ գիծ, ռադիոինֆորմացիայի վերստիման համար: Ստեփանակերտի ռադիոհանգույցը ամեն օր վերահսկում էր նաև միութենական, հանրապետական և տեղական հաղորդումները (15 ժամ ծավալով): Տեղական հաղորդումների ժամից գառ (18.00-19.00), մնացած ժամերին վերահսկարձակվում էր Բարձի ԲԽ-8 ռադիոկայանը: Բայց ինչպես Մոսկվայից ու Բարձից, այնպես էլ տեղական ստուդիայից տրվող հաղորդումները աղմուկով և խաթարումներով էին և հաճախակի էին զտարեցվում: Արդեն մի քանի տարի էր, ինչ չէր գործում «Լուսուրդկա» կոչվող համակարգը, ինչը եճեց տեղական հեռարձակման հենար: Ընդհանուր առմամբ էր: Ռադիոհաղորդումները տրվում էին սովորական մագնիսոֆոններից, որոնք ծայնագրության համար էին, այլ ոչ թե հեռարձակման: Իսկ ստուդիայում չէին պահպանվում ակուստիկայի նորմերը, ինչը նույնպես սպորում էր հաղորդումների որակի վրա. գրեթե աղմուկ միշտ հաղորդումների մեջ էր:

Այս ամենը վկայում է, որ Լեռնային Հարաբաղի ռադիոն ղեկուն շատ հեռու էր լիարժեք լրատվամիջոց կոչվելուց, թեև ժամանակակիցները բարձր են գնահատում ռադիոյի այն ժամանակվա դերը, ինչն, անշուշտ, անմիտելի է:

Նեոուպ տարիների ռադիոյի աշխատանքային ընթացքի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ԼՀ մարզային ռադիոն շարունակում էր զարգանալ 60-70-ական թվականներին: Հատկապես հարուստ են 70-ականների արխիվային նյութերը:

Այս տարիների վերաբերյալ նյութերի ուսումնասիրությունը ղեկուն շարունակվում է:

Ամփոփում

Լեռնային Հարաբաղի մարզային ռադիոյի ստեղծման թիվը դեռևս ճշտված չէ, սակայն առավել հավանականը 1928 թիվն է: Մարզային ռադիոյի մասին արխիվային առաջին ավելանդը վերաբերում են 1946-ին: 1940-1950-ական թվականները ռադիոյի վերականգնման և վերափնման տարիներն էին, բայց այն դեռևս հեռու էր լիարժեք ԶԼՄ կոչվելուց: Ռադիոն մարզում շարունակում էր զարգանալ 60-70-ական թվականներին: Հատկապես հարուստ են 70-ականների արխիվային նյութերը, որոնք այժմ ուսումնասիրվում են: Չնայած 60-70-ական թվականներին ավելանում էին ռադիոկետները, տեխնիկական քարնացում էր կատարվում, ռադիոն այդ տարիներին շարունակում էր մնալ աղբյուրանական խշտությունների քաղաքականության խոսափողը:

Резюме

Год создания Нагорно-Карабахского областного радио пока что не определен, но наиболее вероятным является 1928 год. Первые архивные данные об областном радио датируются 1946 годом: 40-50-ые были годами восстановления и переоснащения радио, но ему было далеко до полноценных СМИ. В 60-70-ые годы радио в области продолжало развиваться, особенно богаты архивы 70-ых годов, которые исследуются сегодня.

Գրականություն

Госархив НКР:

1. фонд N 115, опись – 1, ед. хр. – 1; стр. 1, 6

2. фонд N 115, опись – 1, ед. хр. – 2; стр. 11, 57, 58

3. фонд N 115, опись – 1, ед. хр. – 5; стр. 63, 25

4. фонд N 115, опись – 1, ед. хр. – 3; стр. 55, 2, 4

5. Ред. коллегия: М. Бабалян, Н.И. Володин, М. А. Гаспарян, Дж. Б. Кулиев, Б. С. Кеворкян, «В братской семье». (изд. Азербейшр, 1973г.)